

ՄՐՅՈՒՅԹ #18-008

Վառելիքի (բենզինի և դիզելի) գնման վերաբերյալ

Գնառաջարկի հրավեր

Հրավերի ուղարկման ամսաթիվ՝ 05 մայիսի, 2018թ.

Հայտերի ներկայացման վերջնաժամկետ՝ 21 մայիսի, 2018թ., ժամը 13:00

Հարգելի հայտատու,

1. Սույն հրավերով Հայաստանի Ֆուլեր Տնաշինական Կենտրոնը ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմամբ իրականացվող ԱՐԴԻ ծրագրի շրջանակներում հրավիրում է Ձեզ ներկայացնելու վառելիք՝

- Բենզին Ռեգուլյար
- Բենզին Պրեմիում
- Դիզել

մատակարարելու վերաբերյալ Ձեր գնառաջարկը:

2. Սույն հրավերի շրջանակներում Հայաստանի «Ֆուլեր Տնաշինական Կենտրոն» ԲՀԿ-ն և իր գործընկեր Հեյֆեր Փրոջեքթ Ինթերնեյշնլ կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը նախատեսում են գնել ամսական միջինը 2500լ վառելիք:

ՀԱՅՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՁԵՎԸ, ՎԱՅՐԸ ԵՎ ՎԵՐՁՆԱԺԱՄԿԵՏԸ

Կից ներկայացված ձևաչափին համապատասխան պատրաստված Ձեր գնառաջարկը ընդունելի է տպագիր՝ կնքված փակ ծրարով:

Հայտը, որն իր մեջ պետք է ներառի գնառաջարկը և լրացուցիչ տեղեկությունները, որոնք դուք անհրաժեշտ կհամարեք ներկայացնելու, պետք է **մինչև 2018 թ. մայիսի 21-ը, ժամը 13:00** ներկայացվի Հայաստանի «Ֆուլեր Տնաշինական Կենտրոնի» գրասենյակ, որի հասցեն է՝ ՀՀ, Երևան 0051, Կոմիտասի 59:

Հարցերի դեպքում կարող եք գրել sdallakyan@fullercenterarmenia.org հասցեին:

ՀԱՅՏԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

Փաստաթղթերը դրվում են ծրարի մեջ, որը ստանձվում և կնքվում է այն ներկայացնողի կողմից: Ծրարում ներառված փաստաթղթերը կազմվում են բնօրինակից և մեկ պատճենից: Փաստաթղթերի փաթեթների վրա գրվում են ԲՆՕՐԻՆԱԿ և ՊԱՏՃԵՆ բառերը:

Ծրարի վրա նշվում են՝

- ✓ Պատվիրատուի անունը և հայտի ներկայցման վայրը /պատվիրատուի հասցեն/
- ✓ Հայտարարության անունը և համարը
- ✓ <<Չբացել մինչև հայտերի բացման նիստը>> բառերը
- ✓ Հայտատուի/ընկերության անվանումը, գտնվելու վայրը, հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի հասցեն

Գնառաջարկը պետք է ստորագրված լինի հայտատուի լիազոր ներկայացուցչի կողմից, կնքված լինի հայտատուի պաշտոնական կնիքով:

ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՄԱՆ ՁԵՎԸ, ՕՐԸ և ԺԱՄԸ

1. Հայտերի բացումը տեղի կունենա մրցույթի վերջնաժամկետի օրը՝ Կոմիտասի 59 հասցեում (ՀՀ, ք. Երևան), ժամը 14:30-ին, հանձնաժողովի անդամների ներկայությամբ: Հայտատուները հրավիրվում են մասնակցելու հայտերի բացմանը:
2. Գնառաջարկները կգնահատվեն հանձնաժողովի կողմից և արդյունքները կհրապարակվեն կազմակերպության կայքում և հաջողակ հայտատուն կտեղեկացվի 15 օրվա ընթացքում:
3. Յուրաքանչյուր հայտատու կարող է ներկայացնել միայն մեկ գնառաջարկ: Բոլոր գնառաջարկները, որոնք ներկայացվել են սույն կանոնի խախտմամբ, կմերժվեն:
4. Ձեր գնառաջարկն պետք է ուժի մեջ լինի առնվազն 45 (քառասունհինգ) օր՝ սկսած գնառաջարկի ներկայացման վերջնաժամկետից:
5. Գները պետք է առաջարկվեն ՀՀ դրամով՝ առանց ԱԱՀ-ի: ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմամբ իրականացվող «Գյուղի զարգացման արդի նախաձեռնություն» ծրագրի շրջանակներում կտրամադրվի ԱԱՀ-ից ազատելու բոլոր համապատասխան փաստաթղթերը:

ԳՆԱՌԱՋԱՐԿԻ ՁԵՎ

_____ (Ամսաթիվ)

Ում: <<Ֆուլեր Տնաշինական Կենտրոն>> ԲՀԿ

ՀՀ, ք. Երևան, Կոմիտաս 59

Մենք (Կազմակերպության անունը) առաջարկում ենք # 18-008 մրցույթի շրջանակներում վառելիքի մատակարարումը կատարել հետևյալ գնով՝

- Բենզին Ռեգուլյար 1լ - (գումարը թվերով և բառերով) ՀՀ դրամ առանց ԱԱՀ
- Բենզին Պրեմիում 1լ - (գումարը թվերով և բառերով) ՀՀ դրամ առանց ԱԱՀ
- Դիզել 1լ - (գումարը թվերով և բառերով) ՀՀ դրամ առանց ԱԱՀ

Մույն Գնառաջարկը և Ձեր կողմից գնառաջարկի ընդունման գրությունը հիմք կհանդիսանան մեր միջև Պայմանագրի կնքման համար: Մենք հասկանում ենք, որ դուք պարտավոր չեք ընդունել ստացված ամենացածր կամ որևէ այլ Գնառաջարկ:

Մեր գնառաջարկը ուժի մեջ է (օրերի քանակը թվերով և բառերով) օր՝ սկսած գնառաջարկի ներկայացման վերջնաժամկետից:

Լիազոր անձի ստորագրությունը _____

Ստորագրողի անունն ու պաշտոնը _____

Հասցե _____

Հեռ. _____

Էլ. փոստ _____